

րիք 7000, Յոյնք 20,000, այլևայլ օտարականք, եւրոպացիք 90,000: Անցեալ դարուն վերջը Փռանկաց քննիչ գիտնականք 2,500,000 համարէին. հիմայ ոմանք ինչուան 7 միլիոն: Իսկ բնակութեան տեղիքն՝ 40 քաղաք, 3600 գիւղ. ըստ 1847 հաշուի ոմանց՝ 4450 էին գեօղք և քաղաք. հիմայ, բաց ի Սիւէզի պարանոցին կողմի երկիրներէն (Սիւէզ, Իսմայիլիէ, Բորդ Սաիտ) համարուին 60 վիճակք, 113 քաղաքք, 3340 գիւղք: Միջին իմն հաշուով թէ բնակարանաց թէ բնակչաց թիւն իբրեւ կէսն է Արուսահլի գրածին և Բ դարում մէջ եղածին: Հաւանօրէն մօտաւոր վերջի տարիներ աւելի ստոյգ մարդահամար եղած պիտի ըլլայ, զոր դեռ չունիմք ի ձեռին¹:

1. Յետ տպագրութեան բանիցս՝ շնորհիւ բարձրապատիւ պաշտօնէից Արքայափայլ Խէտիվէին, ընդունեցանք երկու հատոր մանրամասն աշխարհահամարի 1882 տարւոյ. յորում՝ յատուկ էգիսպոսի նշանակութիւն 6,806,381 բնակիչք, ի 13,115 քաղաքս, գիւղս, աւանս, հանդրուանս, և այլն, բնակչաց յիշեալ թիւոյ մէջ՝ միայն իբր 100,000 են հաստատ բնակարան չունողք: